Եպիփան Կիպրացու սաղմոսի մեկնության հիշատակարանից տեղեկանում ենք, որ այդ ձեռագրի երկրորդ գրիչը սովորել է Սանահնի դպրոցում և հիշատակում է նաև իր աշակերտակից մի քանի ընկերներին։ Նա գրում է.

Յիշեցէք... «նաև զսիրելի ուս[ու]մնակիցն իմ զմա[տ]թէոս՝ զաղբիւրն շնորհացն, որ կիսաւրեայ ել յաշխարհէս, և զնորին (զ)հարազատն զԿարապետն, որ զընթերցուածոց մեկնիչս ինձ աւանդեցին և բազում գութ ցուցին, և զՄխիթար զմիւս աշակերտակիցս, զՅուսէփ կազմող գրոցս և զՍիմէոն»։

Իր դասընկեր Մատթեոսին աղբիւր շնորհաց անվանելուց հետո նշում է, որ նրա ազգական Կարապետն իր ուսուցիչն է եղել և ավանդել է ընթերցվածոց մեկնություն (մեկնել է հին և նոր կտակարանները), մյուս դասընկեր Մխիթարն էլ կազմել է գիրքը։ Այդ սաղմոսի մեկնությունն էլ իբրև դասագիրք է գրվել դպրոցի աշակերտների ձեռքով։ Այդ վկայվում է այն բանով, որ ինչպես տեղեկանում ենք երկրորդ գրչի գրած հիշատակարանից, ձեռագիրը չավարտած, մեռել է Մատթեոս գրիչը և շարունակությունը գրել է նրա դասընկեր Ստեփանոսը։

Հիշատակարանի մեջ եղած մի ակնարկից էլ է երևում, որ այդ ձեռագիրն իբրև դասագիրք է ծառայել։ Ստեփանոս գրիչն իր հիշատակարանի վերջում գրում է՝

«Արդ, երես անկեալ աղաչեմ, որք ազգտիք կամ ուսանիք, կամ ընդ գաղափար ունիցիք...»[1]։

Սովորական ձեռագրերի մեջ մեր ընդգծած բառերի փոխարեն համապատասխան տեղում լինում է որք ընթեռնոյք, իսկ այստեղ ազգտիք, ուսանիք բառերը, կարծում ենք, պարզ ակնարկ են այն մասին, որ այդ ձեռագիրը ծառայել է իբրև դասագիրք։

Սանահնի 13-րդ դարի տասնական և քսանական թվականների արձանագրությունների մեջ շինական անվամբ կամ ուղղակի անձնանունով վանքին մարդ նվիրելու մասին մի քանի տեղեկություններ կան։ Նման տեղեկություններ ծանոթ են նաև այլ վանքերի վիմական արձանագրություններից։ Սակայն շինականների կյանքն ու վիճակն ուսումնասիրող գիտնականները դեռևս զգուշանում են մարդկանց վանքին նվիրաբերելու մասին վերջնական խոսք ասել, որովհետև այդ նյութերի մեծ մասը դեռևս հրատարակված չեն, իսկ հրատարակվածների մեջ էլ բազմաթիվ սխալներ կան։ Այնուամենայնիվ սովետահայ պատմաբանները վերջերս սկսել են հետաքրքրվել այդ խնդրով։ Այդ հարցով առանձապես զբաղվել է վերջերս լույս ընծայած իր գրքի մեջ ընկեր Ս. Պողոսյանը և հետաքրքիր ու սրամիտ եզրակացությունների է հանգել, բայց ցավալի է, որ նա իր ձեռքի տակ քիչ նյութեր է ունեցել այդ հարցի վերաբերյալ, որովհետև շինականների վանքին նվիրելու մասին եղած կարևոր տեղեկություններից շատերը, ինչպես ասացինք, դեռևս հրատարակված չեն։

Սանահնում երեք արձանագրություններ կան 13-րդ դարի տասնական և քսանական թվականներին պատկանող, որոնց մեջ գրված է վանքին շինական նվիրելու մասին։

№ 15 արձանագրության մեջ, 1222 թվականին Շոթոռիկի որդի Դավիթ իշխանը Ոռնակա գոմուց կեսը, մի հալալաշենցի շինական, մի արծաթե խաչ, երկու շուրջառ... նվիրել է Սանահնի վանքին։

№ 45 արձանագրության մեջ Սմբատի որդի Վասակը գրում է, որ իր ամուսնու՝ Ափայի հոգու համար Սանահնի վանքին նվիրել է Բերդիկ գյուղում գտնվող Տիկնաքարի այգին, Փոքրիկ այգին, շինական Գորոռոնոնք, Աբեսալմանց հողը։

Շինականի, Գորոռոնոնքի և Աբեսալմանց հողի քերականական կապակցությունը լավ չի հասկացվում, այդ պատճառով մեր մեկնաբանությունը կարող է ճիշտ չլինել, բայց որ շինական է նվիրաբերվել վանքին, այդ անկասկած է։

№ 46 արձանագրության բովանդակությունից իմանում ենք, որ 13-րդ դարի առաջին կեսին, Աբասի որդի Գրիգորի առաջնորդության ժամանակ, Վասակն ու իր կին Խաթունը իրենց որդի Քուրդիշահի հոգու համար Սանահնի վանքին նվիրել են Մովսես Մարգարեի որդուն (Երևի Մարգարեի որդի Մովսեսին) յուր շահ ու զենով և 10 օրավար էլ լավ աղբին հող, որ ազատ է ամեն տեսակ հարկերից։ Այնուհետև արձանագրության

[1] Գարեգին արքեպ. Հովսեփյան, Խաղբակյանք կամ Պռոշյանք հայոց պատմության մեջ, հատ. Բ, Երուսաղեմ, 1942, էջ 34—35։